ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիս 2018 թվականի N 76---Ա

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՀՀ մարզպետարաններին գումար հատկացնելու և ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 816-Ն որոշմամբ՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի հանրապետական փուլը կազմակերպելու և անցկացնելու նպատակով 1.200.0 հազ. դրամ (մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ) սուբսիդիա հատկացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և սահմանված կարգով կնքել հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի եզրափակիչ փուլի կազմակերպման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

30.07.2018

X

VERIFIED OCSP 30.07 2018 17:04:34 GMT+4

Подписано HAMBARDZUMYAN KAREN 2611820473 5

2018թ. հուլիսի 27
ք. Կապան

Հավելված
ՀՀՍյունիքիմարզպետի
2018թ. հուլիսի 27-ի
N 76--Որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի հանրապետական փուլի

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազարդրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	20.0
2	Նվերներ	4237	200.0
3	Գրասենյակային նյութեր և հագուստ (սպորտային համազգեստ)	4261	980.0
4	Ընդամենը		1.200.0

ՀՀՍյունիքիմարզպետարանի
աշխատակազմիղեկավարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան